ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Հրազդան 12.04.2018թ.

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

/ Գ. ՏԻԳՐԱՆՅԱՆ /

Ընդունել ի գիտություն՝

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

1.2 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցին ծանուցում էր ուղարկվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերի պահանջի վերաբերյալ: Սահմանված ժամկետում և սահմանված կարգով մասնակիցի կողմից ներկայացվել էր որակավորման չափանիշները հաստատող փաստաթղթերը:

2. Ընթացակարգի հայտերը գնահատելու և պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 և 1.2 կետերը հանձնաժողովը որոշեց հաստատել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները, ինչպես նաև <<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ- 01/18>> ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել << Մավշին>> ՍՊԸ-ին՝ վերջինիս առաջարկելով << Հրազդան քաղաքի Միկրոշրջան, Կենտրոն և Հարավային թաղամասերի փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման >> պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ 0:

Մասնակցում էին՝ Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Գ.Տիգրանյան

Անդամներ՝ ---------- Գ.Ստեփանյան

---------- Ս.Տիգրանյան

---------- Շ.Խաչատրյան

---------- Մ.Կոստանյան

Քարտուղար՝ ---------- Ք.Բաղդասարյան